



Հրատարակուած է Օրթագիւղի Ս. Աստուածածին
Եկեղեցւոյ եւ Թարգմանչաց Վարժարանի
թաղային խորհուրդի աջակցութեամբ:

Հրատարակչատան կողմէ

Անթուան տէօ Սենթ Էքզիւիերիի (Լիոն, 1900-1944)
հէքիաթ-վիպակը համաշխարհային գրականութեան
կարեւոր գիրքերէն մէկն է, որ այժմ կը ներկայանայ
արեւմտահայերէն նոր թարգմանութեամբ՝ կատարուած
Gallimard հրատարակչութեան Յունիս 1993-ին Ֆրանսայի
մէջ տպագրած հրատարակութենէն: Որպէս յաւելուած
տեղադրուած է բառարան մը՝ դիւրացնելու համար
պատանիներուն ընթերցանութիւնը:

Հրատարակութեան ու խմբագրութեան վերաբերեալ

Փոքրիկ Իշխանը



Կարծեմ թե վայրի թռչուններու գաղթին օգտուած էր
թռչելու համար:

ԱՆԹՈՒԱՆ ՏԷՕ ՍԵՆԹ-ԷԿՁԻՒՓԵՐԻ
Փոքրիկ Իշխանը



Հեղինակին գծագրություններով



Ֆրանսերէնէ թարգմանեց՝
Լուիզ Պաքար



Արաս Հրատարակչություն
A r a s Y a y i n c i l i k
İstiklal Caddesi, Hıdivyal Palas 231 Kat 1
34430 Tünel, Beyoğlu-İstanbul
Tel: (0212) 252 65 18 - 243 06 02
www.arasyayincilik.com
info@arasyayincilik.com
Sertifika No: 44967

ARAS - ԱՐԱՍ 165

ՓՈՔՐԻԿ ԻՇԽԱՆԸ Անթուան Տէօ Սենթ-Էկզիպիերի

Ֆրանսերէնէ թարգմանեց՝
Լուիզ Պաքար

Սրբագրեց՝
Սեան Տէյիրմենճեան

Էջադրեց՝
Մելիսա Արսէնեան

Տպագրութիւն
Սենա Օֆսեթ

Ա տպագրութիւն Մայիս 2016, Իսթանպուլ
Գ տպագրութիւն Յունուար 2024, Իսթանպուլ


ISBN 9786055753658

ԼԷՈՆ ՈՒԷՐԹԻՆ

Այս գիրքը չափահասի մը ծօնելուս համար
ներողութիւն կը խնդրեմ երախաներէն:
Ատիկա ընելու լուրջ արդարացում մը ունիմ.
այն որ՝ այս անձը աշխարհի մէջ լաւագոյն
բարեկամս է: Երկրորդ արդարացում մըն ալ ունիմ.
այս անձը ամէն բան կրնայ հասկնալ, նոյնիսկ
մանկական գիրքերը: Ունիմ երրորդ արդարացում
մըն ալ. այս անձը Ֆրանսա կ'ապրի, անօթի է ու
կը մսի: Շատ պէտք ունի մխիթարուելու: Եթէ բոլոր
այս արդարացումներս չեն բաւեր, կ'ուզեմ գիրքս
ծօնել այն երախային որ եղած էր անցեալին այս
չափահաս անձը: Բոլոր չափահասները
ատենին նախ երախաներ էին: (Սակայն
անոնցմէ քիչեր կը յիշեն այս կէտը):
Ուրեմն, կը սրբագրեմ ձօնս.

ԼԷՈՆ ՈՒԷՐԹԻՆ

ԵՐԲ ՓՈՔՐԻԿ ՄԱՆՉՈՒԿ ՄԸՆ ԷՐ:




Ա.

Վեց տարեկան էի, երբ անգամ մը հիանալի նկար մը տեսայ կոյս անտառներու մասին գիրքի մը մէջ, որ ունէր «Ապրուած պատմութիւններ» խորագիրը: Այդ նկարը կը ներկայացնէր վիշապօծ մը որ գազան մը կը կլլէր: Ահա այդ նկարին ընդօրինակութիւնը:

Գիրքին մէջ կ'ըսուէր. «Վիշապօծերը իրենց որսը լման կը կլլեն, առանց ծամելու: Յետոյ այլեւս չեն կըրնար շարժիլ եւ իրենց վեց ամսուան մարսողութեան շրջանին կը քնանան»:


Ատոր վրայ բաւական մտածեցի կոյս անտառներու արկածախնդրութիւններուն մասին, յետոյ գունաւոր մատիտով մը ես ալ կրցայ թիւ 1 նկարս գծել: Սապէս էր ան.



Գլուխ-գործոցս մեծերուն ցոյց տուի եւ հարցուցի իրենց թէ արդեօք նկարս կը վախցնէ՞ր զիրենք:

«Գլխարկ մը ինչո՞ւ պիտի վախցնէր», պատասխանեցին:

Նկարս գլխարկ մը չէր ներկայացներ, այլ վիշապօձ մը՝ որ իր կլլած փիղը կը մարսէր...: Որպէսզի կարենան հասկնալ, այս անգամ գծեցի վիշապօձին ներքնամասը. մեծերը միշտ բացատրութիւններու պէտք ունին:



Թիւ 2 նկարս սապէս էր. մեծերը զիս խրատեցին, որ մէկդի ձգեմ վիշապօձերու արտաքինը, կամ ներքնամասը գծելու գործը եւ ժամանակս յատկացնեմ պատմութեան, աշխարհագրութեան, թուաբանութեան եւ քերականութեան դասերուս:

Այսպէսով, վեց տարեկանիս նկարչութեան հիանալի ասպարէզը լքեցի:

Թիւ մէկ եւ թիւ երկու նկարներուս ճախողութիւնը վիատեցուցած էր զիս: Մեծերը առանձին որեւէ բան չեն հասկնար, իսկ տղոց համար շատ յոգնեցուցիչ բան է տեսական բացատրութիւններ տալ անոնց...:

Ուրեմն ստիպուեցայ տարբեր ասպարէզ մը ընտրել եւ օդանաւ վարել սորվեցայ: Աշխարհի գրեթէ բոլոր անկիւնները թռայ: Այդ ընթացքին աշխարհա-

գրութիւնը, ճիշդ է, շատ շատ օգտակար եղաւ ինծի: Մէկ ակնարկով կրնայի Չինաստանը Արիզոնայէն զանազանել: Շատ կարեւոր է ասիկա, մանաւանդ երբ մարդ գիշեր ատեն մոլորած է:

Այսպէսով, կեանքիս մէջ շատ մը լուրջ անձերու հետ շփումի առիթներ ունեցայ: Երկար ատեն ապրեցայ մեծ մարդոց հետ: Շատ մօտէն ճանչցայ զիրենք, բայց ասիկա իրենց մասին կարծիքս չբարելաւեց:

Երբ կը հանդիպէի մեծի մը որ քիչ մը աւելի խելացի կը թուէր ինծի, անմիջապէս կը փորձէի զինք, ցոյց տալով թիւ մէկ նկարս, զոր միշտ մօտս կը պահեմ: Կ'ուզէի գիտնալ թէ արդեօք իսկապէս հասկցող մէկն էր: Բայց միշտ նոյն պատասխանը կը ստանայի. «Ատիկա գլխարկ մըն է»: Այն ատեն ո՛չ վիշապօճերու, ո՛չ կոյս անտառներու եւ աստղերու մասին կը խօսէի իրեն հետ: Անոր մակարդակին կ'իջնէի եւ իր հետ կը խօսէի պրիչի, կոլֆի, քաղաքականութեան եւ փողկապներու մասին: Այսպէսով, ան ինծի պէս ողջամիտ մէկուն ծանօթացած ըլլալուն շատ գոհ կը մնար...:

Բ.

Այսպէս, առանց իսկական խօսակիցի մը առանձին ապրեցայ, մինչեւ որ վեց տարի առաջ Սահարայի անապատին մէջ օդանաւս խանգարուեցաւ: Շարժակին մէջ բան մը կոտորած էր. եւ որովհետեւ քովս ո՛չ մեքենագէտ, ո՛չ ալ ճամբորդ ունէի, ես ինքս ստանձնեցի այդ դժուարին նորոգութիւնը: Ինծի համար մահու կենաց հարց էր. հազիւ ութը օրուան ջուր ունէի:

Առաջին գիշերը քնացայ աւագին վրայ, ամէն տեսակ բնակչութենէ հազարաւոր մղոններ հեռու: Շատ աւելի առանձին էի, քան՝ ովկիանոսին մէջտեղը լաստի մը վրայի նաւաբեկեալը: Այնպէս որ կրնաք երեւակայել զարմանքս երբ արեւածագին տարօրինակ մեղմ ձայն մը զիս արթնցուց: Ան կ'ըսէր.

-Խնդրեմ... ոչխար մը գծէ ինծի:

-Համմէ:

-Ոչխար մը գծէ ինծի...:

Շանթահարուածի պէս ոտքի ցատքեցի: Աչքերս ուժով ուժով շփեցի եւ ուշադրութեամբ նայեցայ: Շատ տարօրինակ տղեկ մը լրջօրէն զիս կը զննէր:


Ահաւասիկ անոր լաւագոյն նկարը, զոր յաջողեցայ գծել հետագային: Անշուշտ իմ գծածս բնորդին չափ գեղեցիկ չէ: Բայց յանցաւորը ես չեմ: Վեց տարեկանիս մեծեր նկարչութեան ասպարէզին մէջ ջլատած էին զիս եւ վիշապօճերու արտաքինէն ու ներքնամասէն տարբեր բան գծել չէի սորված:

Ուստի զարմանքէն մեծ մեծ բացուած աչքերով կը դիտէի այդ տղեկը: Մի՛ մոռնաք որ ամէն տեսակ բնակչութենէ հազարաւոր մղոն հեռու էի: Իսկ փոքրիկը ոչ մոլորած, ոչ ալ անօթութենէ, ծարաւէ, յոգնութենէ կամ վախէ մեռած մէկու մը կը նմանէր: Որեւէ բնակչութենէ հազարաւոր մղոն հեռու, անապատին մէջ մոլորած երախայի մը երեւոյթն ալ բնաւ չունէր: Երբ վերջապէս կրցայ խօսիլ, հարցուցի իրեն.

-Բայց... ինչ գործ ունիս հոս, ինչ կ'ընես:

Ան մեղմ ձայնով, շատ լուրջ բան մը ըսելու պէս կրկնեց.

-Խնդրեմ... ոչխար մը գծէ ինծի...:



Ահաասիկ անոր լաագոյն նկարը,
գոր յաջողեցայ գծել հետագային:



Երբ առեղծուածին առջեւ շշմած մնացած ես, չես կրնար չը-
հնազանդիլ:

Բնակելի վայրերէ հազա-
րաւոր մղոն հեռու, մահ-
ւան վտանգին տակ, ըրածս
անհեթեթ իսկ թուէր ինծի,
գրպանէս թուղթի կտոր մը
եւ գրիչ մը հանեցի:

Բայց նոյն պահուն յիշեցի որ յատկապէս պատ-
մութիւն, աշխարհագրութիւն, թուաբանութիւն, քերա-
կանութիւն սորված էի. եւ ըսի թէ (քիչ մը անտրամադիր
կերպով) ես գծել չէի գիտեր: Ան պատասխանեց.

-Հոգ չէ, ոչխար մը գծէ ինծի:

Եւ քանի որ երբեք ոչխար գծած չէի, իրեն գծեցի
մէկը այն երկու նկարներէն, զորս կրնայի գծել. վի-
շապօծին արտաքին երեւոյթը:

Շշմած, քարացած մնացի երբ լսեցի տղէկին ըսա-
ծը.

-Ո՛հ, ո՛հ, ես վիշապօծի մը փորին մէջ փիղ չեմ ու-
զեր: Վիշապօծը շատ վտանգաւոր է, իսկ փիղը՝ շատ
խոշոր: Իմ ապրած տեղս փոքր է: Ես ոչխարի մը պէտք
ունիմ: Ոչխար մը գծէ ինծի:

Գծեցի:

Ուշադիր նայեցաւ.

-Ո՛հ, այս մէկը շատ հի-
ւանդ է, ուրիշ մը գծէ:

Սկսայ գծել: Իմ բարեկա-
մը թեթեւ ժպիտով ու ներո-
ղամիտ շեշտով ըսաւ.





-Կը տեսնես չէ՞, ասիկա ոչխար
չէ, խոյ է, կոտոշներ ունի:
Նորէն վերսկսայ:

Այդ մէկն ալ նախորդներուն նը-
ման մերժուեցաւ:

-Աս ալ շատ ծեր է, ես կ'ուզեմ ոչ-
խար մը որ երկար ապրի:

Համբերութիւնս ալ հատած էր. մա-

նաւանդ կ'ուզէի ժամ առաջ գործի լծուիլ եւ օդանաւիս
շարժակը քակել: Սա նկարը խզբզեցի ու ըսի.

-Ասիկա սնտուկն է. ուզած ոչխարդ մէջն է:

Բայց զարմանքս մեծ եղաւ, տեսնելով փոքրիկ դա-
տաւորիս լուսաւորուած դէմքը:

-Ճիշդ ա՛ն էր ուզածս: Ինչ կ'ըսես, արդեօք շատ խոտ
պէտք պիտի ըլլայ այս ոչխարին:

-Ինչո՞ւ կը հարցնես:


-Որովհետեւ ապրած տեղս շատ պզտիկ է:

-Վստահաբար եղածը կը բաւէ. շատ փոքր ոչխար
մը տուի քեզի:

Գլուխը ծռեց դէպի նկարը.

-Այնքան ալ փոքր չէ... Նայէ՛, քնացեր է արդէն:

Ահա՛, այսպէս ճանչցայ Փոքրիկ իշխանը:



Բաւական ժամանակ պէտք եղաւ հասկնալու համար թէ ուրկէ կու գար ան: Փոքրիկ իշխանը որ տեսական հարցում կ'ուղղէր ինծի, կարծես բնաւ չէր լսեր իմ իններս:

Պատահաբար իր արտասանած բառերը կամաց կամաց ամէն բան բացատրեցին: Այսպէս, երբ առաջին անգամ օդանաւս նկատեց (օդանաւս պիտի չգծեն, որովհետեւ աստիկա շատ բարդ գործ է ինծի համար), հարցուց.

-Ինչ է այդ բանը, հոն:

-Անիկա բան չէ, կը թռչի. օդանաւ է, իմ օդանաւ:

Հպարտ էի իրեն հասկցնելով թէ կը թռչէի: Այն ատեն բացագանչեց.

-Ինչպէս. ուրեմն, երկինքէն ինկար:

-Այո,՝ ըսի համեստօրէն:


-Ինչ զուարճալի բան...:

Փոքրիկ իշխանը խնդալու սկսաւ, ինչ որ ջղայնացուց զիս: Կ'ուզեմ որ դժբախտութիւններս լուրջի առնուին: Յետոյ ասելուց.

-Ուրեմն, դուն ալ երկինքէն կու գաս: Ո՞ր մոլորակէն ես:

Այդ պահուն, հոն իր ներկայութեան գաղտնիքը պարզուեցաւ եւ ես հարցուցի.

-Ուրեմն դուն ուրիշ մոլորակէ մը կու գաս:



Չպատասխանեց, թեթև մը շարժեց գլուխը, շարունակելով օդանաւս դիտել:

-Ճիշդ է որ ատով շատ հեռուներէն եկած չես կըրնար ըլլալ...:

Բաւական ժամանակ խորունկ մտածումներու մէջ թաղուած, մնաց այդպէս: Յետոյ գրպանէն հանեց ոչխարս եւ մեծ ուշադրութեամբ սկսաւ քննել իր գանձը:

Կրնաք երեւակայել թէ «ուրիշ մոլորակներ»ու մասին իր կէս-կատար խօսքերը որքան հետաքրքրութիւնս շարժած էին: Փորձեցի աւելին գիտնալ:

-Դո՛ւն ուրկէ կու գաս, անուշ մանչուկս: Ո՞ր է ասրած տեղը: Ո՞ր տանիլ կ'ուզես ոչխարս:

Մտախոհ լռութեան պահէ մը ետք պատասխանեց.

-Շատ լաւ եղաւ որ այդ սնտուկը տուիր. գիշերները իբրեւ տուն պիտի կարենայ գործածել զայն:

-Անշուշտ: Եթէ բարի ըլլաս, չուան մըն ալ կու տամ, որպէսզի օրուան մէջ կարենաս կապել ոչխարը. ցից մըն ալ կու տամ:

Զգացի թէ առաջարկս ցնցեց Փոքրիկ իշխանը:

-Կապե՛լ... Ի՞նչ տարօրինակ գաղափար:

-Բայց եթէ չկապես, կրնայ գլուխը առնել երթալ ու կը կորսուի:

Բարեկամս չէր կրցած զսպել նոր խնդուք մը...:

-Բայց ո՞ր կ'ուզես որ երթայ:

-Ի՞նչ գիտնամ, որեւէ տեղ, կրնայ շիփ-շիտակ երթալ, հեռանալ...:

Այն ատեն Փոքրիկ իշխանը լրջօրէն ըսաւ.

-Հոգ չէ, ասրած տեղս այնքան փոքր է որ...,- ու թերեւս քիչ մըն ալ մեկամաղձոտութեամբ աւելցուց.

-Շիփ-շիտակ յառաջանալով չես կրնար շատ հեռուները երթալ...: